

Արբուհույն, օգնել կուսին վտանգելոյ և փախուցելոյ, որ եղև նորա աղախին ի մանկութենէ: Եւ գնացեալ անտի ի Գեթսեմանի ի Գերեզման Աստուածածնին և անդ աղօթելով . . . : Եւ երկըրպագելով Աստուածածնին և բազում արտասուս հեղեալ, մնալով անդ ամօրեայ ժամանակաւ»: Այս տողերէն կը հասկըցուի որոշապէս թէ Հովիտիմեանց ուխտագնացութեան ժամանակ տակաւին չէր շինուած Գեթսեմանիի եկեղեցին:

Մեր պատմագիրներէն Մովսէս Կաղանկայտուացին (Է. դար) Երուսաղէմի եկեղեցիներու շինութեանց մասին ունի հատուած մը (Էջ 420-23) հետեւայ վերնագրով. «Վասն որ ի Սուրբն Երուսաղէմ եկեղեցոյ շինուածք թուով եւ իխմեսորերով, եւ սոյցն գտցես անդաւոր»: Այս գրուածքը թանկագին յիշատակարան մըն է չորրորդ դարու Կոստանդինեան արքայավայել եկեղեցական շինութեանց: Ասոր հեղինակը հինգերորդ դարու հայ ուխտաւոր մըն է և ժամանակակից լատին կուսան Էթէրիայի և կրտսերն Մելանիայի: Կաղանկայտուացին մեծ ծառայութիւն մը մատուցած է Ս. Տեղեաց հոյակապ սրբավայրերու պատմութեան՝ իր գիրքին մէջ պահելով այս պատմական յիշատակարանը, որ նոր լոյս մը կը սփռէ Կոստանդինոս կայսեր շինած եկեղեցիներու հիմնարկութեան մասին, կ'ամբողջացնէ ինչ որ Եւսեբիոս և Էթէրիամեզ կը պատմեն այդ շինուածքներու, մասնաւորապէս Ս. Յարութեան Տաճարին և Մատրան կամ Գողգոթայի վերաբերութեամբ. միայն թէ սկզբնական յիշատակարանը կրած է յետոյ երկու ձեռնմխութիւններ, կամ լաւ ևս, երկու յաւելուածներ:

Մենք արդէն յիշեցինք Ս. Կուսի յուզարկաւորութեան ժամանակ հրեայ Յեփոնիա (կամ Սեփոնիա) քահանային արարքը ու Գեթսեմանիի եկեղեցւոյն որմանկարներուն մէջ տեսնուած նկարչական տեսարանները. այդ մասին վերև յիշուած յիշատակարանը կը գրէ հետեւալը. «Եւ յայնմ տեղոջ ուր գտարք կուսին դագաղն կաշաւ հրեայն առաջոյ քաղաքն չսալ քաղել՝ գմբէք կապեալ՝ ի չորից տեսցնել, եւ տեսնց պղնձի խաչ զգեցուցեալ, որ եւ մարմարիոնել, եւ անի ցոյսոյ 250 քարեայ ասիճանել միևնջեւ ցտարք գերեզման կուսին որ ի ձորն Գեթսեմանի, եւ անի միևնջեւ ի շտան 2իքեկեայ ուսի վերացաւ Քրիստոս 800 ասիճանել»: Այս հատուածին մէջ ակնարկուած քառասուն շէնքէն մինչև Գեթսեմանիի ձորն շինուած քարէ աստիճանները կը յիշուին, բայց չի յիշատակ-